Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի մարզային փուլ
11-12-րդ դասարաններ (120 րոպե)

№ 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Վարդան վարդապետը (Հետու Վարդապետ) ո՞ր վանքի վանահայրն էր.

1) Ֆոնուզի Սուրբ Կարապետի *(0,5 միավոր)*
2) Դերիկի վանքի
3) Վարագավանքի
4) Մշո Սուրբ Կարապետի

2. Ե՞րբ է Աստվածաշունչն առաջին անգամ տպագրվել հայերեն.

1) 1512 թ. *(0,5 միավոր)*
2) 1666 թ.
3) 1567 թ.
4) 1638 թ.

3. Ո՞վ է Սարգիս զորավարի աճյունից մասունք ամփոփել Կարբիում.

1) Ս. Մեսրոպ Մաշտոցը *(0,5 միավոր)*
2) Ս. Սահակ Պարթևը
3) Ս. Գրիգոր Լուսավորիչը
4) Ս. Ներսես Պարթևը

4. Ե՞րբ է Ս. Հովհան Օձնեցու նախաձեռնությամբ եկեղեցական ժողով գումարվել Դվինում.

1) 719 թ. *(0,5 միավոր)*
2) 722 թ.
3) 729 թ.
4) 709 թ.

5. Ո՞վ էր Պահլավունիների տոհմից հայոց վերջին կաթողիկոսը.

1) Գրիգոր Ապիրատ *(0,5 միավոր)*
2) Գրիգոր Վկայասեր
3) Ներսես Շնորհալի
4) Գրիգոր Տղա

6. Ո՞ր ուսմունքի համաձայն «մարդը կամքի ազատություն չունի».

1) հեդոնիզմ *(0,5 միավոր)*
2) ինդետերմինիզմ
3) էվդոնիզմ
4) դետերմինիզմ

7. Ե՞րբ է ավարտվել հայոց Պատարագամատույցի կազմավորումը.

1) XVI դարում *(0,5 միավոր)*
2) XIV դարում
3) XVIII դարում
4) XVII դարում

8. Ո՞վ է գրել. «Չկա ոչինչ, որ կարելի չլինի բացատրել, և չկա ոչինչ, որ անմատչելի լինի բանականությանը».

1) Անանիա Շիրակացին *(0,5 միավոր)*
3) Եզնիկ Կողբացին
2) Դավիթ Անհաղթը
4) Գրիգոր Տաթևացին

№ 9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. Ամենայն Հայոց կաթողիկոս Նահապետ Ա Եղեսացու օրոք են կառուցվել Վաղարշապատի _____եկեղեցին, Երևանի Կոնդի և Քանաքեռի եկեղեցիները:

(1 միավոր)

10. 630 թ. Մուհամմադին հպատակվեց նաև իր հայրենի քաղաք Մեքքան, որտեղ նա կուռքերից մաքրեց գլխավոր սրբավայրը՝ _____ ն:

(1 միավոր)

11. «Վեհամոր Ավետարանը» հայերեն ամբողջական ձեռագիր հնագույն Ավետարանն է, թվագրվում է VII դարով և երկար ժամանակ պահվել է Գանձակի շրջանի ---------- գյուղում, այնուհետև Գանձակի Ս. Գրիգոր եկեղեցում, որտեղից էլ 1975 թ. բերվել է Ս. Էջմիածին և նվիրվել Վազգեն Ա Վեհափառին: (1 միավոր)

12. Սուրբ Պատարագի մաս կազմող ---------- պատարագը սկսվում է այն պահից, երբ հացն ու գինին բերվում են Սուրբ Սեղանի վրա, և պատարագիչ քահանայի աղոթքներով ու աստվածային զորությամբ սրբագործվում:

(1 միավոր)

№ 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Հիմնադրման տարեթիվը համապատասխանեցնել ուսումնական հաստատության անվանը. ***(1 միավոր)***

1. Ներսիսյան դպրոց
2. Սկյուտարի ճեմարան
3. Արմաշի դպրեվանք
4. Գևորգյան ճեմարան

ա) 1838 թ.
բ) 1810 թ.
գ) 1874 թ.
դ) 1824 թ.
ե) 1889 թ.

1	
2	
3	
4	

14. Հայոց կաթողիկոսի անունը համապատասխանեցնել իրեն ժամանակակից արքայի անվանը. ***(1 միավոր)***

1. Հեթում I
2. Աբաս Բագրատունի
3. Գագիկ I Բագրատունի
4. Աշոտ I Բագրատունի

ա. Սարգիս Ա Սևանցի
բ. Գրիգոր Զ Ապիրատ
գ. Գևորգ Բ Գառնեցի
դ.Կոստանդին Ա Բարձրբերդցի
ե. Անանիա Ա Մոկացի

1	
2	
3	
4	

№ 15-17

Աշխատանք սկզբնաղբյուրով

15. «Ես միշտ էլ հավատացել եմ իմ ժողովրդի ոգուն: Ես գիտեմ նրա անցած ճանապարհի դառնությունները: Ես համոզված եմ նաև, որ ազգն իմ հայոց անարգ թշնամուն դեռ չի ասել իր վերջին խոսքը: Եվ խոսքն այդ պիտի լինի հաղթական»:

Ո՞ւմ արտասանած կոչից է մեջբերված հատվածը: ***(1 միավոր)***

_____

16. «Նա քաղցր եղանակով գրեց Սուրբ պատարագի քարոզը, նույն խոհականությամբ՝ շարականների տները, իր անվան տառերով երկու գանձեր՝ մեկը «Վարդավառի», մյուսը «Աստվածածնի փոխման»»:

Ո՞ւմ մասին է պատմիչի խոսքը: ***(1 միավոր)***

_____

17. «Սա աշխատասեր և հայրենասեր մարդ լինելով, ... լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես օտարացեղ ազգերը ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները և օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա»:

1) Ո՞ր պատմիչն է մեջբերված հատվածի հեղինակը: *(1 միավոր)*

---

2) Ո՞ւմ մասին է պատմիչի խոսքը: *(1 միավոր)*

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Ստորև տրված պնդումներից որո՞նք են ճիշտ. *(2 x 1 = 2 միավոր)*

ա) Հայոց եկեղեցու Արցախի թեմը վերահաստատվեց 1989 թ.:

բ) Ամենայն Հայոց Գարեգին Ա կաթողիկոսի տնօրինությամբ 1996-2001 թթ. Աստվածաշնչի ամբողջական բնագիրը գրաբարագետ մասնագետների խումբը վերածեց աշխարհաբարի:

գ) Արցախը Հայաստանին վերամիավորելու խնդրանքով Վազգեն Ա կաթողիկոսը դիմում հղեց ԽՍՀՄ ղեկավար Ի. Ստալինին:

դ) 1962 թ. Հայոց եկեղեցին դարձավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, այնուհետև՝ Եվրոպական եկեղեցիների համաժողովի անդամ:

ե) 1990 թ. Վազգեն Ա Վեհափառն այցելում է Վատիկան և հանդիպում Հռոմի քահանայապետ Հովհաննես Պողոս Զ պապին:

զ) 1957 թ. Վազգեն Ա-ի ջանքերի շնորհիվ Մայր Աթոռին վերադարձվեց նշանավոր ազգային բարերար Ալեք Մանուկյանի նվիրատվությամբ կառուցված Էջմիածնի հոգևոր ճեմարանի նոր մասնաշենքը:

19. Ստորև թվարկված տոներից ո՞ր երկուսն են Տերունական.

ա) Թարգմանչաց տոն *(2 x 1 = 2 միավոր)*

բ) Սրբոց Վարդանանց տոն

գ) Աստվածածնի վերափոխման տոն

դ) Սուրբ Սարգիս

ե) Սրբոց Ղևոնդյանց տոն

զ) Խաչվերաց

է) Սրբոց Հռիփսիմյանց տոն

№ 20

Շարադրանք

(2 միավոր)

Ներկայացրե՛ք մայրենի լեզուն որպես ազգը բնորոշող հատկանիշ և նրա գործառույթները: Ձեր կարծիքով՝ հայոց լեզուն ինչպե՞ս կարող է նպաստել «հայ» տեսակի պահպանմանը և հարատևմանը: